ԵԷԴ/0021/11/14/

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՀԱՐՈՒՑՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՆԱԽԱՔՆՆԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ԲՈՂՈՔԸ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՌՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«28» հոկտեմբերի 2014թվ. ք.Երևան

Երևան քաղաքի էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը հետևյալ կազմով.

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ	Վ.Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՄԲ	Ս.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ
	Ա.ԱՐՂԱՄԱՆՅԱՆԻ
	Ա.ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ
ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ՝	
ԲՈՂՈՔԱԲԵՐ	Հ.ԳԵՎՈՐԳՅԱՆԻ
ԲՈՂՈՔԱԲԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ	Տ.ՍԻՐԱԴԵՂՅԱՆԻ
ՆԱԽԱՔՆՆԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ	
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ	Ա.ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ
ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՄԱՐՄՆԻ	
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ	Է.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

2014թվականի հոկտեմբերի 28–ին, դռնբաց դատական նիստում, քննության առնելով ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի կալանավոր Հրաչյա Հենզելի Գևորգյանի բողոքը՝ քրեական գործի հարուցումը մերժելու մասին նախաքննական մարմնի 24.06.2014թվ. որոշումը վերացնելու պահանջի վերաբերյալ.

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի կալանավոր Հրաչյա Հենզելի Գևորգյանի դիմումի կապակցությամբ 2014թվականի մայիսի 31–ին ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության էրեբունու բաժին է ստացվել ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան Կ.Անդրեասյանի դիմումն այն մասին, որ ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Մաշտոցի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի նախկին պետ Արթուր Գևորգյանը ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի կալանավոր Հ.Գևորգյանին տեսակցելու ժամանակ փորձել է համոզել նրան ինքնախոստովանական ցուցմունքներ տալ՝ սպառնալով հակառակ դեպքում «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում պատիժը կրող քրեական հեղինակությունների միջոցով հաշվեհարդար տեսնել վերջինիս հետ:

Բողոքի կապակցությամբ ՀՀ Հատուկ քննչական ծառայությունում նախապատրաստվել են նյութեր, իսկ 11.06.2014թվականի նյութերն ըստ քննչական ենթակայության ուղարկվել է ՀՀ ոստիկանության ՔԳՎ Երևանի էրեբունու քննչական բաժին: Նախաքննական մարմնի 24.06.2014թվականի որոշմամբ, ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի կալանավոր Հրաչյա Հենզելի Գևորգյանի հաղորդման կապակցությամբ նախապատրաստված նյութերով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185 հոդվածի հիմքով քրեական գործի հարուցումը մերժվել է՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

Նախաքննական մարմնի տվյալ որոշման դեմ Հ.Գևորգյանը վերադասության

կարգով բողոք է ներկայացրել ՀՀ Գլխավոր դատախազին, որի քննարկումը հանձնարարվել է Երևան քաղաքի դատախազին և վերջինիս 24.07.2014թվականի որոշմամբ բողոքը մերժվել է:

02.09.2014թվականին Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան է ստացվել կալանավոր Հրաչյա Գևորգյանի բողոքը՝ քրեական գործի հարուցումը մերժելու մասին նախաքննական մարմնի որոշումը վերացնելու խնդրանքով:

Դատաքննությամբ ձեռք բերված տվյալները.

Բողոքաբեր Հրաչյա Հենզելի Գևորգյանի ներկայացուցիչ Տաթևիկ Սիրադեղյանը դատարանին հայտնեց, որ իր վստահորդ Հրաչյա Գևորգյանը 2011թվականի հոկտեմբերի 18–ին բերման է ենթարկվել ՀՀ ոստիկանություն, որից հետո նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 218 հոդվածի 2–րդ մասի 1–ին, 3–րդ, 4–րդ, 7–րդ կետերով, ՀՀ քրեական օրենսգրքի 34–139 հոդվածի 1–ին մասով, ՀՀ քրեական օրենսգրքի 316 հոդվածի 1–ին մասով, ՀՀ քրեական օրենսգրքի 182 հոդվածի 1–ին մասով և որպես խափանման միջոց կիրառվել կալանավորումը: Տվյալ քրեական գործն այժմ դատարանում է՝ դատաքննության փուլում, ՀՀ Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Մ.Մելքոնյանի վարույթում:

Իր վստահորդը նախնական կալանքի տակ է գտնվել նախ ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում, այնուհետև առողջական խնդիրների պատճառով տեղափոխվել է ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկ և մինչև այժմ շարունակում է գտնվել այնտեղ: ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ տեղափոխվելուց հետո այնտեղ այցելած ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի աշխատակիցներին նա պատմել է ոստիկանության Երևան քաղաքի վարչության Մաշտոցի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի նախկին պետ Արթուր Գևորգյանի կողմից իր նկատմամբ շուրջ երեք ամիս շարունակ կիրառված սպառնալիքների, այնուհետև 2013թվականի օգոստոսի 14–ին ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ–ում իր հետ ունեցած կարճատև տեսակցության մասին:

2014թվականի մայիսի 31–ն ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան Կ.Անդրեասյանը հանցագործության մասին հաղորդում է ներկայացրել ՀՀ Հատուկ քննչական ծառայություն, որի հիման վրա ՀՀ Հատուկ քննչական ծառայությունում նախապատրաստվել են նյութեր: 2014թվականի հունիսի 16–ին ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ–ում բացատրություն է տվել այն մասին, որ ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Մաշտոցի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի նախկին պետ Արթուր Գևորգյանը սպառնալիքների միջոցով փորձել է իր վստահորդին համոզել դատաքննության ժամանակ ինքնախոստովանական ցուցմունքներ տալ և հետ վերցնել իր դեմ ներկայացված բոլոր բողոքները, այլապես քրեակատարողական հիմնարկի ծառայողների և ոստիկանության աշխատակիցների միջոցով հաշվեհարդար կտեսնի նրա նկատմամբ: 2014թվականի հունիսի 11–ին վարույթն իրականացնող մարմնի՝ ՀՀ Հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչի պաշտոնակատար Ա.Մխիթարյանի կողմից որոշում է կայացվել նյութերն ըստ քննչական ենթակայությամբ ուղարկելու մասին: ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Էրեբունու քննչական բաժին: 2014թվականի հունիսի 24–ին ՀՀ ոստիկանության ՔԳՎ Էրեբունու քննչական բաժնի քննիչ Ա.Մաթևոսյանը վերանայելով իր վստահորդի հաղորդման առթիվ ՀՀ Հատուկ քննչական ծառայությունում նախապատրաստված նյութերը, կայացրել է քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում՝ հանցակազմի բացակայության հիմքով:

2014թվականի հուլիսի 14–ին սույն որոշման դեմ ներկայացվել է դիմում–բողոք ՀՀ Գլխավոր դատախազ Գ.Կոստանյանին խնդրելով վերանայել քրեական գործի հարուցումը մերժելու մասին նախաքննական մարմնի 2014թվականի հունիսի 24–ի որոշումը և գործն ուղարկել նախաքննության, սակայն Երևան քաղաքի դատախազ Ա.Դավթյանի

24.07.2014թվականի որոշմամբ իրենց բողոքը մերժվել է և հաստատվել նախաքննական մարմնի որոշման հիմնավորվածությունը: Տվյալ որոշումը փոստային առաքման ծառայության միջոցով ստացվել է 2014թվականի հուլիսի 29–ին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17–րդ հոդվածի ուժով, քրեական հետապնդում իրականացնող մարմինը գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար կրում է օրենսգրքով նախատեսված բոլոր միջոցառումները ձեռնարկելու պարտավորություն:

ՀՀ քրեական դատավարության օրենսդրքի 27 հոդվածի 1–ին մասի համաձայն, հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը պարտավոր են իրենց իրավասության սահմաններում քրեական գործ հարուցել հանցագործության հատկանիշներ հայտնաբերելու յուրաքանչյուր դեպքում, օրենքով նախատեսված բոլոր միջոցառումները ձեռնարկել հանցագործություն կատարած անձանց և հանցագործության, ինչպես նաև դրա կատարման հանգամանքները բացահայտելու համար: Սակայն, իր վստահորդի հաղորդման հիման վրա նախապատրաստման նյութերի ընթացքում վարույթն իրականացնող մարմինները չեն գործել հիշյալ հոդվածներով ամրագրված քննության սկզբունքների պահպանմամբ, որի արդյունքում կայացվել է իր վստահորդ Հ.Գևորգյանի իրավունքները և օրինական շահերը ոտնահարող որոշում:

ՀՀ Հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչի պաշտոնակատար Ա.Մխիթարյանը ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ–ում իր վստահորդից բացատրություն է վերցրել նախ 2014թվականի հունիսի 16–ին, իսկ այնուհետև 2–3 օր անց: Մինչդեռ, վերջինիս կողմից նյութերն ըստ քննչական ենթակայության ուղարկելու մասին որոշում կայացվել է դեռևս 2014թվականի հունիսի 11–ին: Նշվածից կարելի է եզրակացնել, որ իր վստահորդից բացատրություն է վերցվել ոչ իրավասու մարմնի կողմից, քանի որ 2011թվականի հունիսի 16–ին նախապատրաստված նյութերն արդեն պետք է ուղարկված լինեին քննչական բաժին, իսկ եթե նույնիսկ դեռևս չէին ուղարկվել, ապա նման որոշում կայացված լինելու պայմաններում, ՀՀ Հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչի պաշտոնակատար Ա.Մխիթարյանն իրավասու չէր նախապատրաստված նյութերով քննչական գործողություններ կատարել: Նյութերն ըստ քննչական ենթակայության ուղարկելու մասին որոշումը կամ իրականում կայացվել է 2014թվականի հունիսի 16–ից հետո՝ հետին ամսաթվով, կամ իր վստահորդից վերցված բացատրությունը գրառվել է հետին ամսաթվով՝ դեռևս 2014թվականի հունիսի 11–ից առաջ:

Վարույթն իրականացնող մարմինը կատարել է միակողմանի քննություն, որի նպատակը չի եղել օբյեկտիվ իրականության բացահայտումը: Նշված պնդումն ապացուցվում է մի շարք հանգամանքներով: Այսպես, հիմք է ընդունվել միայն Արթուր Գևորգյանի կողմից բացատրությամբ հայտնած տեղեկությունները, որոնք հաստատելու համար հղում է կատարվել կալանավորի անձնական գործում առկա 2014թվականի օգոստոսի 14–ի թվագրմամբ դիմումին, որով իր վստահորդը խնդրել է տեսակցություն թույլատրել «հորեղբոր» Արթուր Գևորգյանի հետ: Իր վստահորդը չի հերքում հիշյալ փաստաթուղթն իր կողմից գրելու փաստը, սակայն ինչպես բացատրությամբ հայտնել է վարույթն իրականացնող մարմնին, դիմումը գրել է հենց Արթուր Գևորգյանի տվյալներով, ով զանգահարել է նրան և ասել, որ կարևոր խոսակցություն ունի և տեսակցելու համար առաջարկել է նման բովանդակությամբ դիմում ներկայացնել ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ–ի վարչակազմին: Ընդ որում, դիմումը գրվել է 2013թվականի օգոստոսի 13–ին և այդ նույն օրն էլ տեղի է ունեցել տեսակցությունը:

Հաղորդման քննարկման ընթացքում չեն ձեռնարկվել անհրաժեշտ բոլոր միջոցները ճշտելու տրված բացատրությունների իսկությունը:

Վարույթն իրականացնող մարմինը նյութերի նախապատրաստման ընթացքում չի պարզել Արթուր Գևորգյանի և իր վստահորդի տեսակցության իրական դրդապատճառները: Իր վստահորդը բացատրությամբ հայտնել է, որ վերջինս իր հետ հանդիպել է որպեսզի համոզի, որ նա հետ վերցնի իր դեմ ներկայացված բողոքները: Վարույթն իրականացնող մարմինը չի պարզել, թե կոնկրետ ինչ հանգամանքների շուրջ է նա բողոքներ ներկայացրել Արթուր Գևորգյանի դեմ և արդյոք դրանք եղել են հիմնավոր:

Այս հանգամանքի պարզաբանումն անմիջական կապ ունի հանցագործության բացահայտման հետ, քանզի բողոքների բնույթից, բովանդակությունից և դրանց իրականությանը համապատասխանությունից է կախված Արթուր Գևորգյանի հնարավոր գործողությունների բնույթն ու ծանրության աստիճանը:

Վարույթն իրականացնող մարմինը չի պարզել, թե արդյոք Արթուր Գևորգյանի կողմից իր վստահորդի հետ տեսակցելու մատնանշված պատճառը, այն է իր վստահորդի կողմից խաղի միջոցով գումար տանուլ տալու և նրանից գումար խնդրելու հանգամանքը, համապատասխանում է իրականությանը, թե ոչ: Մասնավորապես, վարույթն իրականացնող մարմինը չի փորձել պարզել հենց Արթուր Գևորգյանից գումար խնդրելու դրդապատճառները, ինչպես նաև չի պարզել թե իր վստահորդը ինչի հիման վրա է համոզվածություն ունեցել, որ վերջինս պատրաստ է տրամադրել պահանջված գումարը: Արթուր Գևորգյանից գումար խնդրելու հանգամանքը չհիմնավորվելու դեպքում պետք է հարց դրվեր, թե ինչու իր վստահորդը պետք է ցանկանար տեսակցել Արթուր Գևորգյանի հետ, հատկապես այն դեպքում, որ նա իր վստահորդի մտերիմ ազգական չէ, և նրանք մտերիմ հարաբերությունների մեջ չեն գտնվել: Ավելին, Արթուր Գևորգյանն իր վստահորդի դեմ հարուցված քրեական գործով ներգրավված է որպես տուժող և միայն հիշյալ հանգամանքը բավարար է հերքելու նրանից որևէ օգնություն ակնկալելու և առավել ևս օգնությամբ դիմելու հնարավորությունն այն դեպքում երբ իր վստահորդը համոզվածություն ունի, որ հենց ոստիկանության աշխատակիցների միջամտությամբ է իրեն անհիմն մեղադրանք առաջադրվել և չի բացառվում նաև վերջիններիս միջամտությամբ իր վստահորդի նկատմամբ մեղադրական դատավճիռ կայացվելու հավանականությունը: Այս մասին բազմաթիվ հոդվածներ են հրապարակվել տարբեր գանգվածային լրատվական միջոցներով: Արթուր Գևորգյանի հետ, վերջինիս պահանջով իր վստահորդը տեսակցել համաձայնվել է միայն այն պատճառով, որ վերջինս նրան հեռախոսազանգով հայտնել է, որ կարևոր խոսակցություն ունի, որից հետո լավ կլինի ինչպես իր, այնպես էլ նրա համար: Ենթադրելով, որ վերջինս կարող է գործի վերաբերյալ կարևոր տեղեկություններ հայտնել, կատարել է նրա պահանջը և տեսակցության դիմում ներկայացրել ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ–ի վարչակազմին:

Նյութերն ըստ քննչական ենթակայության ուղարկելու մասին որոշման մեջ հղում է կատարված նաև ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ–ի սոցիալ–հոգեբանական և իրավական աշխատանքների բաժնի գլխավոր մասնագետ Ահարոն Հովհաննիսյանի բացատրության վրա, ով հայտնել է, որ Հ.Գևորգյանին սպառնալիքներ հասցնելու վերաբերյալ որևէ տեղեկություն չի ստացվել: Մինչդեռ, վարույթն իրականացնող մարմնի կողմից անտեսվել է իր վստահորդի բացատրությամբ հայտնած այն տեղեկությունն, ըստ որի կատարվածի մասին չի հայտնել ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ–ի վարչակազմին, քանի որ համոզվածություն է ունեցել, որ կատարվածի մասին բարձրաձայնելու պարագայում կարող է իրագործվել հնչեցված սպառնալիքը: Այս փաստն ապացուցվում է այն հանգամանքով, որ դեպքի մասին ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի աշխատակիցներին հայտնել է միայն ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ տեղափոխվելուց հետո:

Արթուր Գևորգյանը շուրջ երեք ամիս սպառնալիքներ է հասցրել իր վստահորդին, փորձելով համոզել չբողոքել իր դեմ: Այնուհետև, ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ–ում իր վստահորդի հետ տեսակցության ժամանակ սպառնացել է, որ հաշվեհարդար կտեսնի քրեակատարողական հիմնարկի աշխատակիցների միջոցով: Մասնավորապես, վերջինս իր վստահորդին սպառնացել է, որ ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ–ի աշխատակիցների միջոցով այնպես կանի, որ իր վստահորդը «կարսերներից դուրս չի գա, այնտեղ էլ կմահանա»: Այս մասին իր վստահորդը բացատրությամբ հայտնել է նաև վարույթն իրականացնող մարմնին:

ՀՀ քրեական օրենսգրքի 137 հոդվածը պատասխանատվություն է նախատեսում սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ գույք ոչնչացնելու սպառնալիքի համար: Մասնավորապես, սույն հոդվածի 1–ին մասի իմաստով քրեորեն պատժելի արարք է համարվում «Սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու

կամ խոշոր չափի գույք ոչնչացնելու սպառնալիքը, եթե այդ սպառնալիքն իրականացնելու իրական վտանգ է եղել»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180 հոդվածի 1–ին մասի համաձայն, հանցագործությունների մասին հաղորդումները պետք է քննարկվեն և լուծվեն անհապաղ, իսկ գործ հարուցելու առիթի օրինականությունը և հիմքերի բավարար լինելն ստուգելու անհրաժեշտության դեպքում՝ դրանց ստացման պահից 10 օրվա ընթացքում: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 182 հոդվածի 1–ին մասի համաձայն, քրեական գործ հարուցելու առիթի և հիմքերի առկայության դեպքում դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը որոշում են կայացնում քրեական գործ հարուցելու մասին:

Նշված հոդվածների բովանդակությունը թույլ է տալիս պնդելու, որ հանցագործության մասին հաղորդումների քննարկման շրջանակներում մինչև քրեական գործ հարուցելը կամ դրա հարուցումը մերժելը, վարույթն իրականացնող մարմինը ստուգում է քրեական գործ հարուցեԷու առիթի օրինականությունը ¨ հիմքերի բավարար լինելը: Քրեական գործ հարուցելու հիմքեր են հանդիսանում այն տվյալները, որոնք վկայում են հանցագործության հատկանիշների առկայության մասին: Այսինքն, այդ փուլում վարույթն իրկանացնող մարմինը ստուգում է արարքում հանցակազմի տարր հանդիսացող օբյեկտի և օբյեկտիվ կողմի առկայությունը, որից հետո կայացնում է համապատասխան որոշում չանդրադառնալով հանցակազմի մյուս տարրերին:

ՀՀ Վճռաբեկ դատարանը ՀՀ քրեական օրենսգրքի 137 հոդվածով նախատեսված հանցակազմի վերաբերյալ իրավական դիրքորոշում է հայտնել իր 08.06.2012թվականի թիվ ԿԴ1/0025/01/11 որոշմամբ: Տվյալ որոշման 17–րդ կետում ՀՀ Վճռաբեկ դատարանը գտել է, որ «/.../ <u>նշված հանցակազմի օբյեկտը հավաքական բնույթ է կրում, այն բաղկացած է մարդու կյանքի և առողջության, ինչպես նաև սեփականության անվտանգության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններից</u>»:

Տվյալ պարագայում հանցագործությունն ուղղված է եղել իր վստահորդի կյանքի և առողջության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններին:

ՀՀ Վճռաբեկ դատարանի նույն որոշման համաձայն «Քննարկվող հանցագործության օբյեկտիվ կողմը դրսևորվում է ակտիվ գործողություններով՝ սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ խոշոր չափի գույք ոչնչացնելու սպառնալիքով: <u>Սպառնալիքը մարդու նկատմամբ հոգեբանական հարկադրանքի ձև է, որը նպատակ է հետապնդում վախեցնել նրան, առաջացնել տագնապի, սեփական անվտանգության կամ գույքի համար անհանգստության զգացում</u>»: Նույն որոշման 18–րդ կետում ՀՀ Վճռաբեկ դատարանը գտել է, որ. «Քննարկվող հանցակազմի պարտադիր հատկանիշներից են սպառնալիքի կոնկրետությունը և իրական լինելը: Տվյալ դեպքում կոնկրետությունը ենթադրում է այն հանգամանքի հստակեցում, թե ինչպիսի վնաս է սպառնում պատճառել հանցավորը՝ սպանել, առողջությանը ծանր վնաս պատճառել, թե խոշոր չափի գույքային վնաս հասցնել: Ընդ որում, սպառնալիքի իրականացման եղանակների մասին հայտարարելը արարքի որակման համար նույնպես նշանակություն չունի: Սպառնալիքն իրական է համարվում այն դեպքում, երբ տուժողը բավարար հիմքեր է ունենում վախենալու դրա իրականացումից: Այլ կերպ ասած, տուժողը պետք է կարծի, որ սպառնալիքի իրականացումը հնարավոր է:

Իր վստահորդին ուղղված սպառնալիքն անմիջականորեն ուղղված է եղել նրա կյանքի և առողջության դեմ, որի հետևանքով նրա մոտ առաջացել է վախ, տագնապ, խիստ անհանգստություն իր անձնական անվտանգության համար: Սպառնալիքի կոնկրետությունը դրսևորվել է կյանքին և առողջությանը վնաս պատճառելու մեջ, մասնավորապես Արթուր Գևորգյանը սպառնացել է, որ այնպես կանի, որ իր վստահորդը. «կարսերներում կմահանա»: Արթուր Գևորգյանը պարբերաբար փորձել է համոզել նրան չբողոքել իր դեմ, սակայն իր պահանջները չկատարելու պայմաններում, օգտվելով ստեղծված օբյեկտիվ իրադրությունից (իր վստահորդի որպես կալանավորի և իր որպես նախկին ոստիկանության աշխատակցի դիրքը, իր վստահորդի նկատմամբ հարուցված քրեական գործով տուժողի կարգավիճակը, իր վստահորդի քրեակատարողական հիմնարկում գտնվելու փաստը) հոգեբանական հարկադրանքի կիրառմամբ փորձել է

կանխել իր վստահորդի կողմից իր գործողությունների դեմ բողոքներ ներկայացնելը: Արթուր Գևորգյանի սպառնալիքներն իր վստահորդի կողմից գնահատվել են իրական, որի պատճառով կատարվածի մասին որևէ անձի չի հայտնել, քանի որ գտնվելով ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ–ում վախ և ներքին համոզվածություն է ունեցել, որ այդ հիմնարկի աշխատակիցները կատարելով Ա.Գևորգյանի պատվերը, կարող են բռնություն կիրառել իր նկատմամբ՝ զրկելով կյանքից կամ առողջությանը պատճառել ծանր վնաս:

Այսպիսով կարելի է հետևություն անել, որ Ա.Գևորգյանի գործողություններում առկա են եղել ՀՀ քրեական օրենսգրքի 137 հոդվածով սահմանված հանցակազմի հատկանիշներ, մինչդեռ վարույթն իրականացնող մարմինը, միակողմանի գնահատական տալով հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերով ձեռք բերված տվյալներին, ինչպես նաև միջոցներ չձեռնարկելով լրիվ և համակողմանի քննություն կատարելու ուղղությամբ, մերժել է քրեական գործի հարուցումը:

ՀՀ Սահմանադրության 18 հոդվածի համաձայն, «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

Յուրաքանչյուր ոք ունի Իր իրավունքները և Ազատություններն օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք:»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 9 հոդվածի 5–րդ մասը սահմանում է իրավունքներն ու ազատություններն օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու անձի իրավունքը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 278 հոդվածի 2–րդ մասի համաձայն, «Դատարանը, սույն օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով, քննում է հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի և օպերատիվ–հետախուզական գործունեության իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների օրինականության վերաբերյալ բողոքները»: Նույն օրենսգրքի 290 հոդվածի 1–ին մասի համաձայն, «Հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ–հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով և եթե նրանց բողոքներր չեն բավարարվել դատախազի կողմից»:

ՀՀ Սահմանադրական դատարանն իր 2009թվականի դեկտեմբերի 7–ի ՍԴՐ844 որոշման 5–րդ կետում հայտնել է դիրքորոշում այն մասին, որ «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի, վերջինիս «Դատական վերահսկողությանը մինչդատական վարույթի նկատմամբ» վերտառությունը կրող 39–րդ գլխի նորմերի համալիր վերլուծությունը վկայում է, որ հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի և օպերատիվ հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների օրինականության վերաբերյալ բողոքների քննությունը, որպես մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործառույթ, ունի իր առանձնահատուկ խնդիրներն ու նպատակները, մասնավորապես բողոքարկվող որոշումների և գործողությունների օրինականությունը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի և օրենսդրության այլ ակտերի պահանջներին համապատասխանությունը ստուգելու արդյունքում պարզել անձի, կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության այլ մասնակցի կամ <u>այլ անձի իրավունքների և ազատությունների խախտման փաստը և կայացնել համապատասխան որոշում անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու վարույթն իրականացնող մարմնի պարտականության, կամ բողոքը մերժելու վերաբերյալ:</u>

(...) Մասնավորապես քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածի 1–ին մասի համաձայն հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, (...) որոշումները և գործողությունները բողոքարկող սուբյեկտներ են քրեական դատավարության մասնակիցները և այլ անձինք, որոնց իրավունքները և օրինական

շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով: Հիշյալ հոդվածի համաձայն, քրեական գործերով մինչդատական վարույթում որպես դատական բողոքարկման անմիջական օբյեկտ (առարկա) են հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, (...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված որոշումները և գործողությունները, այսինքն այնպիսի որոշումներն ու գործողությունները, որպիսիք հատկապես մատնանշված են օրենսգրքի համապատասխան նորմերում:

Բողոքաբերի ներկայացուցիչ Ս.Սիրադեղյանը դատարանին խնդրեց՝ վերացնել քրեական գործի հարուցումը մերժելու մասին նախաքննական մարմնի 24.06.2014թվ. որոշումը:

Բողոքաբեր Հրաչյա Հենզելի Գևորգյանը պնդեց բողոքի պահանջը և միացավ ներկայացուցիչ Ս.Սիրադեղյանի դիրքորոշմանը:

Նախաքննական մարմնի ներկայացուցիչ, ՀՀ քննչական կոմիտեի Երևանի էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ Արմեն Մաթևոսյանն առարկեց բողոքի դեմ և դատարանին հայտնեց, որ նյութերի նախապատրաստումն իրականացվել է ՀՀ Հատուկ քննչական ծառայության կողմից և դրանք քննչական ենթակայության կարգով ստանալով և հետազոտելով, անհերքելի է եղել այն, որ նյութերը լիարժեք նախապատրաստված են եղել և իր կողմից միայն կայացվել է քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում: Վիճարկվող որոշումն օրինական է, կայացվել է գործի հանգամանքների լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ քննության հիման վրա: Բողոքաբեր Հ.Գևորգյանի բողոքում մատնանշած փաստերը հերքվել են նախապատրաստված նյութերով: Իր կողմից կայացված որոշումը հիմնավոր է, այն բխում է ՀՀ քրեական դատավարության օրենսդրության պահանջներից և որոշումը վերացնելու հիմքեր չկան: Նախաքննական մարմնի ներկայացուցիչ Ա.Մաթևոսյանը պատճառաբանված չհամարեց Հ.Գևորգյանի բողոքը և խնդրեց դատարանին բողոքը մերժել՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

Դատախազության մարմնի ներկայացուցիչ, Երևանի էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազության դատախազ Էմիլ Հարությունյանը նույնպես առարկեց բողոքի դեմ և դատարանին հայտնեց, որ նյութերի նախապատրաստման ընթացքում նախաքննության նկատմամբ դատավարական հսկողությունն իրականացվել է իր կողմից: Նախաքննական մարմնի կողմից կատարվել է բազմակողմանի և օբյեկտիվ քննություն, որի ընթացքում հերքվել են բողոքաբեր Հ.Գևորգյանի կողմից Ա.Գևորգյանի հետ կալանավայրում տեսակցելու պատճառաբանությունը սպառնալիքների մասով, քանի որ պարզվել է, որ կալանավորի տեսակցությունները տեղի են ունենում հատուկ խցերում, որին մասնակից է լինում քրեակատարողական հիմնարկի աշխատակիցը: Բացի այդ, Հ.Գևորգյանի բողոքի կապակցությամբ նախկինում ՀՀ Հատուկ քննչական ծառայությունում նույնպես քննվել է քրեական գործ, որը նույնպես կարճվել է: Նման պայմաններում նախաքննական մարմինը իրավացիորեն մերժել է նյութերով քրեական գործի հարուցումը, որի օրինականությունը ստուգվել է վարչական շրջանների դատախազի կողմից: Նշված որոշումը և նյութերը, վերադասության կարգով բողոքարկվելու կապակցությամբ ուսումնասիրվել և իրավական գնահատման է արժանացվել նաև Երևան քաղաքի դատախազի կողմից, որն էլ իր հերթին կայացրել է բողոքը մերժելու մասին օրինական և հիմնավոր որոշում: Դատախազության մարմնի ներկայացուցիչ է.Հարությունյանը խնդրեց դատարանին՝ բողոքաբեր Հայկազ Գևորգյանի բողոքը մերժել՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

<u>Դատարանի իրավական վերլուծությունը</u>.

Դատարանը լսելով բողոքաբեր Հ.Գևորգյանի և նրա ներկայացուցիչ Ս.Սիրադեղյանի հիմնավորումները, նախաքննական մարմնի ներկայացուցիչ Ա.Մաթևոսյանի և դատախազության մարմնի ներկայացուցիչ է.Հարությունյանի առարկությունները, ուսումնասիրելով և գնահատելով նյութերում եղած տվյալները, բազմակողմանի և օբյեկտիվ քննության ենթարկելով հետաքննական մարմնից ստացված ողջ նյութերը գտնում է, որ ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց»

քրեակատարողական հիմնարկի կալանավոր Հրաչյա Գևորգյանի բողոքը անհիմն է և ենթակա չէ բավարարման հետևյալ պատճառաբանությամբ: Ինչպես բողոքի բովանդակության, այնպես էլ բողոքի դատական քննության ընթացքում բողոքաբեր Հ.Գևորյանի կամ նրա ներկայացուցիչ Տ.Սիրադեղյանի կողմից որևէ հիմնավոր փաստարկ կամ ապացույց չներկայացվեց դատարանին՝ ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Մաշտոցի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի նախկին պետ Արթուր Գևորգյանի կողմից իրեն սպառնալու վերաբերյալ, այն է՝ նրա մեղքը հիմնավորող ապացույցների առկայության մասին: Նյութերով դատավարական խախտումների կամ կեղծիք կատարելու բացակայության մասին է վկայում նաև դատարանի հարցմանն ի պատասխան ստացված ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի պետի 07.10.2014թ. թիվ. 40/31–2–1932 գրությունն այն մասին, որ ՀՀ Հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչի պաշտոնակատար Ա.Մխիթարյանը 02.06.2014թվականին ժամը 12^{30}–ից մինչև ժամը 17^{55}–ը և 11.06.2014թվականին ժամը 10^{45}–ից մինչև 12^{05}–ն տեսակցություններ է ունեցել կալանավոր Հ.Գևորգյանի հետ, այսինքն 2014թվականի հունիսի 16–ին Հ.Գևորգյանից բացատրություն վերցնելու մասին վերջինիս մատնանշած հանգամանքը իրականությանը չի համապատասխանում: Դատարանը գտնում է, որ ՀՀ ոստիկանության ՔԳՎ Երևանի էրեբունու քննչական բաժնի քննիչ Ա.Մաթևոսյանի կողմից նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին 24.06.2014թվ. որոշումն օրինական է, այն բխում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185 հոդվածի պահանջներից և վերացնելու որևէ հիմքեր չկան:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17 հոդվածի 3–րդ մասի համաձայն, <u>քրեական հետապնդում իրականացնող մարմինը պարտավոր է ձեռնարկել սույն օրենսգրքով նախատեսված բոլոր միջոցառումները՝ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար</u>...:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27 հոդվածի համաձայն, հետաքննության մարմինը, <u>քննիչը</u>, դատախազը <u>պարտավոր են իրենց իրավասության սահմաններում քրեական գործ հարուցել հանցագործության հատկանիշներ հայտնաբերելու յուրաքանչյուր դեպքում, օրենքով նախատեսված բոլոր միջոցառումները ձեռնարկել հանցագործություն կատարած անձանց և հանցագործության, ինչպես նաև դրա կատարման հանգամանքները բացահայտելու համար</u>:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 176 հոդվածի 1–ին մասի համաձայն, <u>քրեական գործ հարուցելու առիթներ են՝ հանցագործության մասին ֆիզիկական</u> և իրավաբանական <u>անձանց հաղորդումները՝ ուղղված հետաքննության մարմնին, քննիչին, դատախազին</u>:

Բողոքաբեր Հ.Գևորգյանի կողմից ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված դիմումը պարունակել է որոշակի փաստական հանգամանքներ, որոնք ստուգելու նպատակով 2014թվականի մայիսի 31–ին այն ուղարկվել է ՀՀ Հատուկ քննչական ծառայություն, որտեղ նախապատրաստվել են նյութեր և ըստ քննչական ենթակայության ուղարկվել ՀՀ ոստիկանության ՔԳՎ Երևանի էրեբունու քննչական բաժին: Քննիչ Ա.Մաթևոսյանի կողմից ուսումնասիրվել է ստացված նյութերը և կայացվել օրինական որոշում՝ քրեական գործի հարուցումը մերժելու մասին: Բողոքաբեր Հ.Գևորգյանի հաղորդման կապակցությամբ նախապատրաստված նյութերի ուսումնասիրությամբ, դատարանը պարզել է, որ ինչպես ՀՀ Հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչի պաշտոնակատար Ա.Մխիթարյանը, ՀՀ ոստիկանության ՔԳՎ Երևանի էրեբունու քննչական բաժնի քննիչ Ա.Մաթևոսյանը սուբյեկտիվ մոտեցում չեն դրսևորել և ղեկավարվել են միայն վարույթի լրիվությունն ու օբյեկտիվությունն ապահովելու սկզբունքով: Ի վերջո, վարույթի նպատակը դեպքի բոլոր փաստական հանգամանքների ի հայտ բերելն է և դրանում առնչություն ունեցող անձանց գործողություններին իրավական գնահատական տալը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6 հոդվածի 1–ին կետի և 35 հոդվածի 1 մասի 2–րդ կետի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ քրեական դատավարությունում

դեպքը՝ հանցագործության հատկանիշներ պարունակող իրադարձությունն է, որի կապակցությամբ իրականացվում է քրեական դատավարություն, սակայն քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման՝ եթե արարքի մեջ հանցակազմ չկա: Նախաքննական մարմնի կողմից նախապատրաստված նյութերով հերքվել է բողոքաբեր Հրաչյա Գևորգյանին սպառնալիքներ տալու վերաբերյալ փաստեր կամ բավարար ապացույցներ ձեռք չեն բերվել այդ ուղղությամբ: Ինչ վերաբերվում է Արթուր Գևորգյանի կողմից հանցագործություն կատարելուն, մասնավորապես սուտ ցուցմունք տալուն հարկադրելու հանգամանքին, ապա բողոքաբեր Հ.Գևորգյանն այս պարագայում ևս ինքն իրեն հակասում է, քանի որ կոնկրետ տվյալ ժամանակահատվածում նա եղել է մեղադրյալի դատավարական կարգավիճակում և նշված հանցակազմը նույնպես բացակայում է, քանի որ ՀՀ քրեական օրենսգրքի 340 հոդվածը պատասխանատվություն է սահմանում միայն վկային և տուժողին սուտ ցուցմունք տալուն հարկադրելու համար: Նման հանգամանքների առկայության պայմաններում, դատարանը գտնում է, որ նախաքննական մարմնի 24.06.2014թվ. որոշումը հիմնավոր է և դրանով չի խախտվել բողոքաբեր Հ.Գևորգյանի և ոչ մի իրավունք:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290 հոդվածով, դատարանը.

ՈՐՈՇԵՑ

Քրեական գործի հարուցումը մերժելու մասին նախաքննական մարմնի 24.06.2014թվ. որոշումը վերացնելու պահանջի վերաբերյալ ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի կալանավոր Հրաչյա Հենզելի Գևորգյանի բողոքը մերժել՝ այն հիմնավոր չլինելու պատճառաբանությամբ:

Որոշումը վերաքննության կարգով կարող է բողոքարկվել հրապարակման պահից 10 օրյա ժամկետում՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարան:

ԴԱՏԱՎՈՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ Վ.Ա.